ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀԲՄԱՊՁԲ-23-9/1-1ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 20 -ը դեկտեմբերի 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«Դիավանտ» ՍՊԸ-ն** ի դեմս տնօրեն **Դ. Առաքելյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **24.11.2022թ.** կնքված **№ ՀԲՄԱՊՁԲ-23-9/1-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ **հավելված N 2-ով,** նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ,** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով: Վճարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո, համապատասխան եռամսյակում առկա ֆինանսական միջոցների հաշվին, **բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.:**

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչություն,** իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դիավանտ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի5	ք. Երևան, Ազատության 26/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011006492	Հ/Հ 217001271543001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00255375
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ՀԲՄԱՊՁԲ-23-9/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր գումար	Մատակարարումը՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2022թ.
1.	Շարժական թվային ռենտգեն սարք	հատ	1	27 000 000	27 000 000	1

Հավելված N 2
N ՀԲՄԱՊՁԲ-23-9/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	CPV կոդ	Վճարումը նախատեսվում է իրականացնել բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.
1.	Ռենտգենի աշխատանքային կայաններ /Շարժական թվային ռենտգեն սարք/	27 000 000	33111120/503	27 000 000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Դիավանտ» ՍՊԸ
տնօրեն

Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ